Պարոն/Տիկին Ա. Ուլիխանյան *ին*

ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ Գարեգին Բաղրամյանին

խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Գ. Բաղրամյան

«22» 05 2023թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Աշխատակիցների անունները, ազգանունները՝**
   1) Սերգեյ Աղինյան,
   2) Աշոտ Ուլիխանյան:
2. **Զբաղեցրած պաշտոնները՝**
   1) ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ,
   2) ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության պետ:

3. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ավստրիա, քաղաք Վիեննա, 2023 թվականի մայիսի 16-18-ը:

4. Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝ Էներգետիկ համայնքի քարտուղարություն:

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝ Էլեկտրաէներգետիկական շուկայի փոխկապակցման և շուկայի մասնակիցների համար հասանելի էլեկտրաէներգիայի փոխկապակցման հզորությունների 70% թիրախի ուսումնասիրությանը նվիրված սեմինարներին մասնակցություն:

6. Քննարկված թեմաները (հարցերը)՝ Սեմինարների ընթացքում ծանոթացանք էլեկտրաէներգետիկական շուկաների փոխկապակցման Եվրոպական երկրների փորձին և կիրառվող կարգավորումներին: Մասնավորապես, նշվեց, որ շուկայի փոխկապակցումը օպտիմալացնում է երկրների միջև միջսահմանային կարողությունների բաշխումը: Գների և հոսքերի համակարգված հաշվարկի շնորհիվ հասանելի միջսահմանային հզորությունն

ավելի արդյունավետ են օգտագործվում և երկու կամ ավելի շուկաների միջև գների տարբերությունը կրճատվում է: Միևնույն ժամանակ, շուկայի փոխկապակցումը առավելագույնի է հասցնում սոցիալական բարեկեցությունը, թույլ է տալիս խուսափել շուկաների արհեստական պառակտումից: Շուկայի փոխկապակցման արդյունավետությունը ապացուցվում է նաև շուկայաների միջև գների աճող կոնվերգենցիայի միջոցով:

Ներկայացվեցին Էներգետիկ համայնքի էլեկտրաէներգետիկական նոր փաթեթում ներառված ԵՄ դիրեկտիվները և դրանցում իրականացված նոր փոփոխությունները, որոնք ստեղծում են համապատասխան հիմքեր շուկայի փոխկապակցման արդյունավետ իրականացման համար: Նոր փաթեթով նախատեսվում է ԵՄ անդամ երկրների շուկաների ամբողջական ինտեգրում ԵՄ ներքին շուկայում, որտեղ էներգետիկայի կարգավորման համագործակցության ԵՄ գրասենյակի պատվիրակված է որոշումների կայացումը ԵՄ անդամ պետությունների և Էներգետիկ համայնքի պայմանագրային կողմ հանդիսացող երկրների միջև փոխկապակցման ապահովման մասով: Նոր փաթեթով ԵՄ անդամ պետությունների համար ազգային օրենսդրություններում համապատասխան փոփոխությունները կատարելու վերջնաժամկետը սահմանված է 2023 թվականի դեկտեմբերի 31-ը: Շուկայի փոխակցումը այս համատեքստում հանդիսանում է նախապայման Էներգետիկ համայնքի պայմանագրային կողմերի համար ածխածնի սահմանային ճշգրտման մեխանիզմից (CBAM) ազատված լինելու համար:

Ավստրիայի ազգային կարգավորող մարմնի ներկայացուցիչը ներկայացրեց ԵՄ հզորությունների բաշխման և գերբեռնվածության կառավարման կարգավորումները և դրա իրականացման հարցերը, էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորների և հաղորդման ցանցի օպերատորների դերը օր-առաջ և օրական շուկաներում, էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորների կառավարման հարցերը, օր-առաջ և օրական շուկաների համատեղ կառավարման կառուցվածքը, հաղորդման ցանցի օպերատորների պայմանագրային կառուցվածքը, եվրոպական երկրներում օր-առաջ և օրական շուկաների ներկա իրավիճակը, շուկայի փոխկապակցման ղեկավար կոմիտեի գործունեության հարցերը, էլեկտրաէներգիայի փոխկապակցման հզորությունների 70% թիրախի օրենսդրության շրջանակը, նպատակները, հասկացությունները և ԵՄ Էներգետիկ Կարգավորողների Համագործակցության Գործակալության առաջարկները, նշված թիրախի հաշվարկման մեթոդոլոգիան, հաշվարկների նախնական արդյունքները առկա իրավիճակում և հետագա գործողությունները:

Ներկայացվեց նաև օր-առաջ և օրական շուկաներում տիրող իրավիճակը 10 տարի առաջ և հիմա, և նշվեց որ հաղորդման ցանցի օպերատորի դերը շատ կարևոր է:

7. Հանդիպումները, ելույթները՝ այցի ընթացքում հանդիպումներ և քննարկումներ ունեցանք ինչպես Էներգետիկ համայնքի քարտուղարության ներկայացուցիչների, այնպես էլ հրավիրված տարբեր երկրների էներգետիկայի բնագավառի ներկայացուցիչների հետ:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ այցի ընթացքում ձեռքբերվեց պայմանավորվածություն շարունակել հետագա համագործակցությունը, էլեկտրաէներգետիկական համակարգի կարգավորման ընթացքում առաջացող խնդիրների մասով ըստ անհրաժեշտություն հեռավար կարգով կիսվել միմյանց փորձով և փոխանակվել անհրաժեշտ տեղեկատվությամբ, ինչպես նաև կարիքն առաջանալու և հնարավորության դեպքում չբացառել հետագա այցերը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝ ՀՀ էլեկտրաէներգետիկական շուկայի ներկայիս բարեփոխումների, ինչպես նաև ՀՀ կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի №48-Լ որոշմամբ հաստատված մինչև 2040 թվականի էներգետիկ ռազմավարությամբ նախատեսված միջպետական առևտրի զարգացման միջոցառումների և հարևան երկրների հետ էներգահամակարգերի զուգահեռ աշխատանքի իրականացման շրջանակում վերլուծել եվրոպական երկներում կիրառվող կարգարումները, փորձը և անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկներ դրանք Հայաստանում կիրառելու վերաբերյալ:

Գործուղվողներ՝

Ս. Աղինյան ---------- 22.05.2023թ.
(ստորագրությունը, ամսաթիվը)

Ա. Ուլիխանյան ---------- 22.05.2023թ.
(ստորագրությունը, ամսաթիվը)

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով , ք. Երևան Սարյան 22
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)

Հաստատում եմ ՀՀ ՀԾԿՀ Գլխավոր քարտուղար Ա. Սաֆարյան
(պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

181230 մեկ հարյուր ութսունմեկ հազար երկու հարյուր երեսուն դրամը
(թվերով) (տառերով)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N _____

առհաշիվ գումարների ծախսման մասին

«19» « մայիսի » 2023թ.
(կազմման ամսաթիվը)

16.05 - 18.05 2023թ.
(ժամանակաշրջանը)

Հաշվետու անձ ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության պետ Աշոտ Ուլիխանյան
(կառուցվածքային ստորաբաժանման անվանումը) (պաշտոնը) (անունը, ազգանունը)

Գումարների տրամադրման նպատակը գործուղում ք. Վիեննա՝ համաձայն 03.05.2023թ. N324-ՀՆ հրամանի

Առ հաշիվ գումարը						
Սկզբնական մնացորդը	ստացել է				ծախսվել է	Վերջնական մնացորդը
	ամսթիվը			ընդամենը		
	12.05.2023թ.	____ _____ 20 թ.	____ _____ 20 թ.			
1	2	3	4	5	6	7
	181230			181230	181230	0

0 դրամի մնացորդը մուտքագրվել է, գերածախսը վճարվել է
(թվերով) (թողնել ճիշտը)

(մուտքի կամ ելքի դրամարկղի օրդերների վավերապայմանը)

_____ դրամ
(տառերով)

Այլ տեղեկություններ _____

Հաշվետվությունն ընդունեց և ստուգեց գլխ. հաշվապահ՝ Հայկանուշ Սաֆարյան
(պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

NN-ը/կ	Փաստաթղթի անվանումը, համարը, ամսաթիվը	Կատարված ծախսման բնույթը (նպատակային օգտագործումը)	Քանակը	Գինը	Գումարը
1	2	3	4	5	6
1	**29.12.2005թ., 2335-Ն որոշում**	**Օրապահիկ**	**3**	**60410**	**181230**
ԸՆԴԱՄԵՆԸ					**181230**

Հաշվեկշռի անձ **ՀՀ ՀՇԿ հանձնաժողովի ՍՔ վարչության պետ** **Աշոտ Ուլիխանյան**

(պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Հավելված _____ էջ

(փաստաթղթերի էջերի թիվը տառերով)

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով , ք. Երևան Սարյան 22
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը)

Հաստատում եմ ՀՀ ՀԾԿՀ Գլխավոր քարտուղար Ա. Սաֆարյան
(պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

181230 մեկ հարյուր ութսունմեկ հազար երկու հարյուր երեսուն դրամը
(թվերով) (տառերով)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N _____

առհաշիվ գումարների ծախսման մասին

«19» « մայիսի » 2023թ.
(կազմման ամսաթիվը)

16.05 - 18.05 2023թ.
(ժամանակաշրջանը)

Հաշվետու անձ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ Սերգեյ Աղինյան
(կառուցվածքային ստորաբաժանման անվանումը) (պաշտոնը) (անունը, ազգանունը)

Գումարների տրամադրման նպատակը գործուղում ք. Վիեննա՝ համաձայն 03.05.2023թ. N324-ՀՆ հրամանի

Առ հաշիվ գումարը						
Սկզբնական մնացորդը	ստացել է				ծախսվել է	Վերջնական մնացորդը
	ամսաթիվը			ընդամենը		
	12.05.2023թ.	____ _____ 20 թ.	____ _____ 20 թ.			
1	2	3	4	5	6	7
	181230			181230	181230	0

0 դրամի մնացորդը մուտքագրվել է, գերածախսը վճարվել է
(թվերով) (թողնել ճիշտը)

(մուտքի կամ ելքի դրամարկղի օրդերների վավերապայմանը)

(տառերով) դրամ

Այլ տեղեկություններ

Հաշվետվությունն ընդունեց և ստուգեց գլխ. հաշվապահ՝ Հայկանուշ Սաֆարյան
(պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

NN-ը/կ	Փաստաթղթի անվանումը, համարը, ամսաթիվը	Կատարված ծախսման բնույթը (նպատակային օգտագործումը)	Քանակը	Գինը	Գումարը
1	2	3	4	5	6
1	**29.12.2005թ., 2335-Ն որոշում**	**Օրապահիկ**	**3**	**60410**	**181230**
		ԸՆԴԱՄԵՆԸ			**181230**

Հաշվետու անձ **ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի անդամ** **Սերգեյ Աղինյան**

(պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Հավելված _____ էջ

(փաստաթղթերի էջերի թիվը տառերով)